

**«ԿԱՄՈՒՐՋ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն)
կողմից միջցանցային էկրան (Firewall) Check Point 6200 սարքի
ձեռքբերման (գնման) նպատակով մրցութային եղանակով
մատակարար կազմակերպության ընտրության
ծանուցում/հայտարարություն**

Մատակարար կազմակերպությունների ընտրությանը ներկայացվող չափանիշները.

Կազմակերպությունը պետք է բավարարի հետևյալ նվազագույն չափանիշներին.

- Ունենա այդ բնագավառում առնվազն մեկ տարվա գործունեության փորձ:
- Ունենա համապատասխան լիազորված մարմնի կողմից տրված լիցենզիա (պահանջի դեպքում) գործունեության/վաճառքի իրականացման համար:

Կազմակերպության ընտրությանը ներկայացվող պայմանները

- ◆ Ընկերությունը, միջցանցային էկրան (Firewall) Check Point 6200 սարքի ձեռքբերման ընտրության նպատակով ս.թ. օգոստոսի 18-ից մինչև օգոստոսի 25-ը ներառյալ իրականացնում է հրապարակային մրցույթ:
- ◆ Ընկերությունը մրցույթի մասին ծանուցումը/հայտարարությունը տեղադրում է իր կայքէջում:
- ◆ Մրցույթին մասնակցելու ցանկություն ունեցող կազմակերպությունները սահմանված կարգով ներկայացնում են մրցույթին մասնակցելու հայտ:

Ընկերության և կազմակերպության միջև կնքվող պայմանագրում, որպես պարտադիր պայման, պետք է նշվի կազմակերպության կողմից պայմանագրով սահմանված պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դիսկի չափը:

Կազմակերպության կողմից հայտերին ներկայացվող պահանջները և դրանց ներկայացման կարգը

- ◆ Մրցույթին մասնակցել ցանկացող կազմակերպությունները, ծանուցման/հայտարարության պայմաններին համապատասխան սահմանված ժամկետներում, առձեռն Ընկերությանն են ներկայացնում առաջարկությունների երկու փաթեթ՝ մեկ ծրարով:
 - Առաջին փաթեթ. ներկայացվում են Ընկերությանը առաջարկվող սարքի տեխնիկական բնութագիրը և ընդհանուր պայմանները՝ տեխնիկական հայտ,
 - Երկրորդ փաթեթ. ներկայացվում է սարքի գնային առաջարկություն՝ ֆինանսական հայտ:

Հայտերը ներկայացվում են սուսնձված, կնքված և/կամ ստորագրված ծրարով, որտեղ

պետք է ներառված լինեն երկու փաթեթները:

Հայտերն առձեռն ընդունվում են մինչև հայտարարության մեջ նշված հայտերի ներկայացման օրը: Ընկերությունը, կազմակերպության ցանկության դեպքում, հայտի ընդունումը հաստատում է համապատասխան գրառում կատարելով փաթեթին կից ներկայացվող գրության օրինակի վրա, մասնավորապես նշվում է մասնակցի անվանումը, հայտի ընդունման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը, հայտն ընդունող աշխատակցի անունը, ազգանունը և պաշտոնը:

Հայտերն Ընկերության կողմից գրանցվում են գրանցամատյանում, ըստ ստացման հերթականության, նշելով գրանցման համարը, տարին, ամիսը, ամսաթիվը և ժամը, մասնակցի անվանումը,

Ընդհանուր՝ տեխնիկական հայտ

Ընդհանուր հայտը պետք է ներառի հետևյալ տեղեկատվությունն ու փաստաթղթերը.

- 1 Կազմակերպության տվյալները, մասնավորապես՝ լրիվ անվանումը, գտնվելու վայրը, հեռախոսահամարը,
- 2 Պետական գրանցման վկայականի, կանոնադրության, լիցենզիայի պատճենները /առկայության դեպքում/,
- 3 Սարքի տեխնիկական և այլ բնութագիրը
- 4 Մատակարարման ժամկետները,
- 5 Այն ընկերությունների ցանկը, որոնց վերջին երեք տարվա ընթացքում կազմակերպությունը մատուցել է աշխատանքներ/ծառայություններ, կատարել է վաճառքներ,
- 6 Կազմակերպության և/կամ Ընկերության հայեցողությամբ այլ անհրաժեշտ տեղեկություններ և փաստաթղթեր:

Ֆինանսական հայտ

Ֆինանսական հայտը պետք է ներառի հետևյալ տեղեկատվությունը.

- 1 Սարքի վաճառքի ընդհանուր գինը, որը պետք է ներառի բոլոր տեսակի ծախսերը, այդ թվում՝ հարկերը, տուրքերը և այլն,
- 2 Ծառայության մատուցման/վաճառքի ընդհանուր գնի վճարման ձևը, պայմանները և ժամկետները,
- 3 Կազմակերպության և Ընկերության միջև կնքված պայմանագրով սահմանված՝ կազմակերպության կողմից պարտականությունների չկատարման դիսկի չափը,
- 4 Կազմակերպության հայեցողությամբ ֆինանսական կողմին վերաբերող այլ անհրաժեշտ տեղեկություններ և հիմնավորող փաստաթղթեր:

Միջցանցային էկրան (Firewall) Check Point 6200.

Միջցանցային էկրան մոդուլի արտադրողականություն՝ 9 Gbps:

Ներխուժման կանխարգելման համակարգի (IPS) արտադրողականություն՝ 4.65 Gbps:

Վիրտուալ մասնավոր ցանցի (VPN) արտադրողականություն՝ 2.57 Gbps:

Միաժամանակյա սեսիաների քանակը՝ 8,000,000;

Միացումների քանակը վայրկյանում՝ 67,000;

Արտադրողականություն NGFW՝ 3,72 Gbps:

Ներկառուցված պորտերի քանակը՝ 10 x 1 GbE (copper):

Հիշողություն՝ RAM 8GB;

Տվյալների պահպանման փոխարինող համակարգ՝ 240 GB SSD;

Չափը՝ 1RU:

Միջցանցային էկրանի պահանջները.

Լուծումը պետք է աջակցի միջցանցային էկրանի շյուզի վիրտուալիզացիան մի քանի վիրտուալ շյուզերի նմուշների համար (լրացուցիչ արտոնագրով): Լուծումը պետք է կարողանա ապահովել Sandboxing ֆունկցիոնալությունը: Sandbox- ը ստեղծվել է Zero-day հաքերների կողմից և անհայտ վնասակար հարձակումներով՝ ստատիկ ստորագրությունը ստեղծելուց առաջ: Ընդլայնելիություն - Կլաստերի շյուզերի ավելացնելու ունակություն: Ցանց – Վիրտուալ փոխարկիչների և վիրտուալ երթուղիչների աջակցում VS – ի միջև կապի կանոնների կարգավորման համար: Անվտանգություն - Firewall, VPN, User Awareness, QoS, Application Control, URL Filtering, IPS, Anti-Bot, Antivirus, Anti-Spam:

Արտոնագրերի բաժանորդագրություն և սպասարկում երեք տարով